ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

9 փետրվարի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

19
(2685)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՓԱՇԻՆՅԱՆԻ ՈՒՇԱԳՐԱՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեկ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ուշագրավ հայտարարություններ արեց խորհրդարանում: Պատասխանալով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հռիփսիմե Գրիգորյանի հարցին՝ Փաշինյանը խոսեց ԵՄ առաքելության՝ Հայաստան այցի մասին եւ ասաց բաներ, որոնք հակասում էին նախկինում ասվածներին: Նա, ըստ էության, փորձեց բացատրել, թե, իր խոսքով ասած, ինչպես է ստացվում, եր ՀԱՊԿ դիտորդական առաքելությունը չի ժամանում Հայաստան, այլ ժամանում է ԵՄ դիտորդական առաքելությունը: Նիկոլ Փաշինյանի խոսքով՝ Ադրբեջանն իր ագրեսիվ գործողությունները բացատրում էր նրանով, որ Հայաստանը, կոնկրետ՝ ՀՀ վարչապետը, ավելի ու ավելի շատ ռուսական զորքեր է բերում ու տեղակայում Հայաստան-Ադրբեջան սահմանին ու պատրաստվում է հայ-ռուսական համատեղ ագրեսիվ հարձակում Ադրբեջանի դեմ, եւ Ադրբեջանը հարձակումներով պարզապես փորձում է հավասարակշռել իրավիճակը:

«Արեւմուտքում փորձ էր արվում Հայաստանը ներկայացնել որպես Ռուսաստանի ագրեսիվ քաղաքականության մասնակից, իսկ Ռուսաստանում՝ որպես Արեւմտյան դավադրության մասնակից: Մենք էլ ասացինք՝ շատ լավ, եկե՛ք, դուք տեղում դիտարկեք՝ այդ ամենն իրականությանը համապատասխանում է, թե չի համապատասխանում. սա կարեւոր նյուանսներից մեկն է», - ընդգծեց վարչապետը:

Այս հայտարարությունը ուշագրավ է այն առումով, որ երկար ժամանակ նշվում էր, որ ԵՄ առաքելությունը գալիս է Հայաստանի սահմանը դիտարկելու, օրինակ՝ադրբեջանական ագրեսիայից երաշխավորելու եւ հնարավոր ոտնձգություններն արձանագրելու համար: Ստացվում է հակառակը. նրանք գալիս են համոզվելու, որ մենք չենք պատրաստվում հարձակվել Ադրբեջանի վրա, եւ ավելին՝ հսկելու ռուսական զորքերի տեղաշարժը:

Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, որ ամենաշատն է աղաղակում պետական ինստիտուտների կայացման անհրաժեշտության մասին, միաժամանակ լայն թափով շարունակում է վարկաբեկել եւ նսեմացնել պետական կառույցները: Երիտասարդ «քայլողները» Քաջ Նազարի բախտով նշանակվում են պաշտոնի, այնուհետեւ զղջում եւ հեռանում են պաշտոնից՝առանց բացատրության: Երեկ խորհրդարանում քննարկվում էր ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահի պաշտոնում առաջադրված Սարգիս Խանդանյանի թեկնածության եւ քվեարկության հարցը, քանի որ հանձնաժողովի նախագահ աշխատած Էդուարդ Աղաջանյանը հոգնել էր իր պաշտոնից, հոգնել է պատասխանատվությունից, ցանկանում է դիջեի նախկին աշխույժ կյանքը շարունակել: Մեկ այլ Քաջ Նազարի ճակատագրի մասին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր նախկինում. Ներքին գործերի նախարարության ստեղծումից հետո արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Փամբուխչյանին ներքին գործերի փոխնախարարի պաշտոն զբաղեցնելու առաջարկ է եղել, սակայն նա հրաժարվել է. պատճառն այն է եղել, որ պատգամավորից նախարար դարձած Փամբուխչյանը չէր ցանկանում փոխնախարար աշխատել, այլ հավակնում էր ՆԳ նախարարի պաշտոնին: Լրագրողից պատգամավոր, ապա մարզպետ դարձած Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանն էլ հրաժարվեց պաշտոնից՝առանց հանրային լուրջ հիմնավորման: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նա ցանկանում է աշխատել գործադիրում. մարզպետի աթոռը, կարծես թե, փորձադաշտ էր տիկոջ համար, ու նա էլ «հավես չունի» շարունակելու պաշտոնավարել: Ի վերջո, մարզպետը հեռացավ՝առանց պատասխանատվության զգացումի մարզի բնակիչների հանդեպ: Եվ վերջապես վառ օրինակ էր ՀՀ մարդու իրավունքների նախկին պաշտպան Քրիստինե Գրիգորյանի դեպքը. մեկ տարի պաշտոնավարելուց հետո նա հեռացավ (լավ աշխատանքի առաջարկ էր ստացել): Թվարկված օրինակներն, իհարկե, դրվագներ են, թե ինչպիսի անպատասխանատվություն են ցուցաբերում պետական պաշտոնյաները պետության նկատմամբ:

ՔՊ-ն երեկ անձեռնմխելիությունից զրկեց «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանին: Ընդդիմադիր պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդման գործընթաց կսկսվի: ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Սեյրան Օհանյանի դեմ հանրային քրեական հետապնդում հարուցելու 3 միջնորդություն էր ներկայացրել, որոնցից առաջինը վերաբերում էր զորամասի տարածքների օտարմանը, երկրորդ միջնորդագիրը գաղտնի էր եւ քննարկվեց փակ նիստում, իսկ երրորդ միջնորդագիրը վերաբերում էր արդեն պաշտոնավարման ընթացքում թույլ տված չարաշահումներին: Դատախազի միջնորդությունները լսելուց հետո ՔՊ-ականները միաձայն քվեարկությամբ համաձայնություն տվեցին, որպեսզի Սեյրան Օհանյանը զրկվի պատգամավորական անձեռնմխելիությունից: Ընդդիմությունը բոյկոտել էր թե՛ հարցի քննարկումը, թե՛ քվեարկությունը: Ասել է թե՝ գնդակն արդեն դատախազության դաշտում է. Օհանյանի հետ կապված մյուս հարցերը քննարկվելու են իրավական տիրույթում: Վարույթ իրականացնող մարմինն արդեն կարող է մեղադրանք առաջադրել վերջինիս եւ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն ներկայացնել դատարան: Թեեւ Օհանյանը զրկվեց պատգամավորական անձեռնմխելիությունից, բայց նա շարունակում է պահպանել իր պատգամավորական մանդատը եւ հանդիսանում է «Հայաստան» խմբակցության ղեկավար: Նրա պատգամավորական լիազորությունները կհամարվեն դադարեցված, երբ ազատազրկման դատապարտելու որոշում կայացվի: Կալանքի համար դատախազը կրկին պետք է խորհրդարան գա եւ պատգամավորների համաձայնությունը ստանա:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Վիլեն Գաբրիելյանը դիմել է քաղաքական իշխանությանը՝ Պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի խափանման միջոցը փոխելու ու նրա նկատմամբ ավելի մեղմ լինելու խնդրանքով: Բանն այն է, որ Դավիթ Տոնոյանը գրեթե մեկուկես տարի է, գտնվում է կալանքի տակ, թեեւ իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում: «Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր, որ Վիլեն Գաբրիելյանն ու նախկին նախարարը բարեկամներ են, եւ պատգամավորն այդպես վարվելու պատճառներ ունի: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց տեղեկությունն անձամբ պարզել՝ հենց Վիլեն Գաբրիելյանից, թե նա կոնկրետ ում է դիմել՝ ՀՀ վարչապետի՞ն, միգուցե Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՞ն, կամ միգուցե ՔՊ պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի՞ն, ինչին ի պատասխան նա հայտնեց. «Ինչ կա, հրապարակային դաշտում ասել եմ: Ես ոչ մեկին նրա հարցով չեմ դիմել»: Այսինքն՝հրապարակավ չխոստովանեց, որ դիմել է Տոնոյանին ներելու խնդրանքով, բայց իրականում դիմել է:

ԼՐՋԱՑԵՔ

# ՄԻ՛ ԶԲԱՂՎԵՔ ԱՃՊԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ

**«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանը, վերջերս մասնակցելով Լաչինի շրջափակման մասով ընդդիմության նախաձեռնած լսումներին, սկանդալային հայտարարություն էր արել Արցախի մասով, որը քննադատվեց թե՛ քաղաքական տարբեր շրջանակների, թե՛ հանրության կողմից:**

«Մոռացե՞լ եք, թե հայ-ադրբեջանական հարաբերությունների զարգացումն ինչի բերեց, ինչի առջեւ ենք հիմա կանգնած... Անընդհատ Ղարաբաղի 120.000 բնակիչ... ՀՀ 3 մլն բնակչի համար ենք պատասխանատու, պատասխանատու ենք մեր երկրի համար, առաջնահերթությունները ճի՛շտ դրեք»,- ԱԺ ամբիոնից հայտարարել էր իշխանական պատգամավորը:

Նկատենք, որ պատգամավորը միայնակ էր մասնակցել ընդդիմության լսումներին. իշխող խմբակցության մյուս պատգամավորները ներկա չէին:

Սրան հետեւեց նաեւ Արցախի ԱԺ 5 խմբակցությունների համատեղ հայտարարությունը, որոնք Գուրգեն Արսենյանի հայտարարությունները համարել էին անպատասխանատու, վտանգավոր եւ կոչ էին արել հարցը քննարկել էթիկայի հանձնաժողովում:

«Վերջին շրջանում Հայաստանի Հանրապետության պաշտոնական խոսույթում, մասնավորապես՝ Ազգային ժողովի որոշ պատգամավորների ելույթներում, հաճախ են հնչում հայտարարություններ, որոնք կասկածի տակ են դնում արցախյան ազգային-ազատագրական պայքարի նշանակությունը եւ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, պառակտում մտցնում ազգի ներսում:

Նմանատիպ հայտարարությամբ վերջերս հանդես է եկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանը: Արցախի Հանրապետության Ազգային ժողովի բոլոր խմբակցությունները, խստորեն դատապարտելով նման վտանգավոր վարքագիծը, համոզմունք են հայտնում, որ այդօրինակ արտահայտությունները ոչ միայն չեն բխում հայ ժողովրդի շահերից, այլեւ ջուր են լցնում թուրք- ադրբեջանական տանդեմի ջրաղացին»,-ասված է Արցախի ԱԺ խմբակցությունների հայտարարությունում:

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախի ԱԺ խմբակցությունների այս հայտարարության վերաբերյալ զրուցել է ՔՊ խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանի հետ:

**-Պարոն Արսենյան, Արցախի ԱԺ խմբակցությունները արձագանքել են Ձեր վերջին հայտարարություններին՝ նշելով, որ «դրանք ջուր են լցնում թուրք- ադրբեջանական տանդեմի ջրաղացին»: Ի՞նչ կասեք այս մասին, սպասելի՞ էր նման արձագանք Արցախից:**

-Ես արձագանքելու բան չունեմ. եթե իրենք ինչ-որ բան են ասում, պետք է փորձեն նաեւ հիմնավորել: Թուրք-ադրբեջանական տանդեմի վերաբերյալ իրենց պատկերացումներն ավելի շատ են, քան իմ: Ես Հայաստանի քաղաքական համակարգի ներկայացուցիչ եմ, ՀՀ ԱԺ պատգամավոր եմ եւ սպասարկում եմ Հայաստանի պետական շահը, իսկ թե պետական շահը սպասարկելով՝ որտեղ եմ ջուր լցնում, դա ինձ համար մութ է, իրենց դիմե՛ք, իրենք մասնագետ են այդ տանդեմի ջրաղացի հետ կապված հարցերում, թող իրենց պարզաբանումները տան. ես դրա մասնագետը չեմ:

**-Պարոն Արսենյան, ընդամենը տարիներ առաջ ինքնաթիռներ էիք նվիրում Արցախին, ինչպե՞ս ստացվեց, որ հիմա կարծում եք, թե Արցախն առաջնային չէ, ի՞նչ փոխվեց այս տարիների ընթացքում.**

-Երեւի այդ ժամանակ էլ էի ջուր լցնում թուրք-ադրբեջանական տանդեմի ջրաղացին՝ այդ ինքնաթիռները նվիրելով: Ոչ մի բան չի փոխվել, ես այդ մարդկանց ասում եմ՝ սպասարկե՛ք ձեր ժողովրդի շահերը ու մի՛ զբաղվեք աճպարարությամբ. ընդամենը սա եմ ասում. լրջացե՛ք, խաղ ու պար չէ, պրոբլեմներ ունեք, զբաղվե՛ք այդ պրոբլեմներով, գիտակցե՛ք ձեր պրոբլեմների առկայությունը:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ՊԱՏԱՍԽԱՆ

# ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԿԱՆ

**Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը երեկ Գերմանիայում հայտարարեց, թե օրեր առաջ Ադրբեջանից նոր առաջարկներ է ստացել Հայաստանը:**

Չնայած Լաչինի միջանցքում ստեղծված իրավիճակին՝ Հայաստանի ԱԳ նախարարն արձանագրեց, որ բանակցությունները շարունակվում են: Միրզոյանի խոսքով՝ Հայաստանը հաստատակամորեն է ներգրավված բանակցություններում: Նշենք, որ Հայաստանը խաղաղության պայմանագրի խմբագրված վերջին առաջարկները ներկայացրել էր 2022-ի դեկտեմբերին: Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովը հայտնել էր, որ իրենք Հայաստանին հարաբերությունների կարգավորման 5 կետից բաղկացած առաջարկ են արել: Նշվում էր, որ ադրբեջանական կողմը պատրաստ է Հայաստանի հետ խաղաղության պայմանագիր կնքելու բանակցությունների, եթե պաշտոնական Երեւանն ընդունի այս 5 կետը:

2021 թվականի նոյեմբերի 16-ին Փաշինյանն Ազգային ժողովում հայտարարեց, որ Հայաստանի Հանրապետությունը Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր կնքելու վերաբերյալ երկու մոտեցում ունի՝ դետալացված եւ շրջանակային համաձայնագրի մոդել: Շրջանակային համաձայնագրի մոդելի մոտեցումն այն է, երբ շրջանակը գծվում է առանց մեծ կոնկրետությունների: Խաղաղության համաձայնագրի տեքստը պետք է քննարկվեր Մոսկվայում դեկտեմբերի 23-ին նախատեսված Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հանդիպմանը, սակայն հայկական կողմը խնդրել է հետաձգել այն՝ հաշվի առնելով Լաչինի միջանցքում ստեղծված իրավիճակը:

## ԿՈՊԵՐՖԻԼԴՅԱՆ ՀՆԱՐՔՈՎ ԱՆՀԵՏԱՑԱՎ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն արդեն երկու օր է՝ խորհրդարանում ներկայացնում է Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի եւ Արմեն Չարչյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում սկսելու մասին միջնորդությունները: Այդ երկու օրերին անհնար էր Աննա Վարդապետյանին գտնել Ազգային ժողովի միջանցքներում. նա կարծես կախարդական փայտիկով հայտնվում է ԱԺ նիստերի դահլիճում եւ նույն կախարդական կերպով դուրս գալիս այնտեղից: Լրագրողներն 2 օր է՝ փորձում էին դատախազին մոտենալ, հարցեր ուղղել, այդ թվում՝ իր կողմից ներկայացված միջնորդագրերի մասին, սակայն Աննա Վարդապետյանը մինչեւ վերջ խուսափեց առերեսվել լրագրողների հետ: «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը եւ օպերատորը քննարկման ավարտին եղան ԱԺ բոլոր հնարավոր մուտքերի մոտ՝ ցուրտ եղանակին դրսում հերթափոխով սպասելով Վարդապետյանին: Մեզ հետ դրսում Վարդապետյանին սպասում էին նաեւ նրա ծառայողական մեքենան եւ ուղեկցող թիկնապահները, սակայն մեզ այդպես էլ չհաջողվեց գտնել Աննա Վարդապետյանին: Նրա ծառայողական մեքենան այդ ընթացքում մի մուտքից մյուս մուտք էր տեղափոխվում, «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողն էլ վազում էր մեքենաների հետեւից՝ փորձելով գոնե մեքենա նստելիս մեկ-երկու հարց ուղղել դատախազին: Տիկին դատախազն այդպես էլ դուրս չեկավ շենքից եւ չնստեց իր ծառայողական մեքենան:

Երկու տարբեր մուտքերի մոտեցավ ծառայողական ավտոմեքենան, սպասեց, սակայն դատախազը չիջավ, չնստեց իր մեքենան: Ի վերջո, դատախազի ծառայողական ավտոմեքենան դուրս եկավ ԱԺ դարպասներից առանց Աննա Վարդապետյանի: Դատախազը թերեւս ավելի ուշ օդապարիկով հայտնվեց այլ մեքենայի մեջ եւ հեռացավ Ազգային ժողովի տարածքից: Բանն այն է, որ ավելի ուշ մեզ ծանուցեցին, որ դատախազը խորհրդարանում չէ, արդեն հեռացել է:

Թերեւս հարց տալը լրագրողի իրավունքն է, իսկ պատասխանելը՝ պաշտոնյայի պարտականությունը. այս ընթացքում շատ տարբեր պաշտոնյաներ ենք տեսել, սակայն պատասխանատվությունից խուսափելու համար կոպերֆիլդյան նման հնարքի կիրառումը կամ նման բեմադրություն պատրաստելը բացառիկ էր:

Թափանցիկ կառավարման ու պաշտոնավարման մասին ճամարտակող Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազն իրեն այսպես է պահում, ինչը հարիր չէ ժողովրդական արժեքներ որդեգրած երկրի բարձրաստիճան պաշտոնյային:

ԻՐԱՎԻՃԱԿ

## ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՉԵՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ

2020թ. հուլիսի 12-13-ը տեղի ունեցած մարտերի ժամանակ եւ դրանից հետո ադրբեջանական զինուժը հրետակոծեց Բերդ համայնքի սահմանամերձ բնակավայրերը: Ավելի քան երկուսուկես տարի անց սահմանամերձ Ներքին Կարմիրաղբյուր գյուղի ռմբակոծության հետեւանքները պետության կողմից վերացված չեն: Վարչական ղեկավարի խոսքով՝ գյուղի 4 տներում վերականգնողական աշխատանքներ ընդհանրապես չեն արել: Ազատամարտիկ հաշմանդամ Գառնիկ Լալայանը իր հրետակոծված տան խնդրով դիմել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին, այլ պաշտոնյաների, սակայն նրա տունը չեն նորոգել, վնասված 5 պատուհաններն են նորերով փոխել: Բերդի սահմանագոտում ռմբակոծությունից վնասված տների վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցում է արել Տավուշի մարզպետին: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է.

«2020 թվականի հուլիս ամսին Բերդ համայնքի Այգեպար, Չինարի եւ Ներքին Կարմիրաղբյուր բնակավայրերում հրետակոծության արդյունքում վնասված տների վերանորոգման աշխատանքների համար ՀՀ կառավարության՝ 23.07.2020թ. թիվ 1237-Ն, 06.08.2020թ. թիվ 1308-Ն, 17.12.2020թ. թիվ 2114-Ն եւ 04.03.2021թ. թիվ 308-Ն որոշումներով հատկացվել է 464.6 մլն ՀՀ դրամ: Սահմանված կարգով կապալառու կազմակերպությունների հետ կնքվել են պայմանագրեր, եւ նշված գումարն ամբողջությամբ ուղղվել է վնասված տների վերանորոգմանը: Աշխատանքներն ավարտվել են 2021 թվականի դեկտեմբերին»:

## ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ ՈՉՆՉԱՑՆԵԼ

Վարչապետի աշխատակազմն առաջարկում է անձնական կամ կրոնական ծիսակատարությունների համար օգտագործել միայն սպանդանոցային ծագման մթերք: Մեզ հայտնի դարձավ, որ վարչապետի աշխատակազմն առաջարկում է ոչնչացնել ոչ սպանդանոցային ծագման մթերքը: Բանն այն է, որ մեր հանրապետությունում սեփական կարիքների կամ ծիսակատարությունների համար թույլատրվում է իրականացնել ոչ սպանդանոցային մորթ, բայց շատերն այդ միսը շուկայում են վաճառում: Այսինքն՝ իրավական հիմք է ստեղծվելու ոչ սպանդանոցային մորթի արդյունքում ստացված կենդանական ծագման հումքի եւ մթերքի հայտնաբերման դեպքում ոչնչացնել այն հետագա շուկայահանումը բացառելու համար: Նշենք, որ մեր հանրապետությունում արգելվում է ոչ սպանդանոցային մորթը: Չնայած սրան՝ շուկայում շարունակվում է վաճառվել ոչ սպանդանոցային մորթի կենդանական ծագման միս: Իրավիճակը չի փոխվել անգամ նախորդ տարվա սեպտեմբերի 1-ից սկսված ստուգումներից հետո: Նշենք, որ նախորդ տարվա սեպտեմբերի 1-ից սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը ստուգումներ է իրականացրել շուկայում, որպեսզի պարզի՝ արդյոք ունեն մսի վաճառքի 5-րդ ձեւը՝ սպանդանոցային մորթը հավաստող փաստաթուղթը: Ավելին՝ պարզվում է՝ այդ փաստաթղթի առկայությունը եւս կասկածներ է առաջացնում շատ քաղաքացիների մոտ, քանի որ որոշ սպանդանոցների սեփականատերեր պնդում են, որ այլ սպանդանոցներ 5-րդ ձեւի անասնաբուժական վկայականն ուղղակի վաճառում են:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

# ԻՆՉՈ՞Ւ Է ԵՄ-Ն ԳԱԼԻՍ

**Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ անդրադարձավ խոսակցություններին, թե ինչու ՀՀ կառավարությունը նախընտրեց ընդունել ԵՄ դիտորդական առաքելությունը, իսկ ՀԱՊԿ առաքելությունը՝ ոչ:**

«Թեմայի հետ կապված բազմաթիվ թյուրըմբռնումներ կան: Մենք ՀԱՊԿ-ի պարագայում շատ հստակ խնդիր ենք ձեւակերպել, քանի որ ՀԱՊԿ-ն ունի շատ մանրամասն նկարագրություններով փաստաթղթեր, այդ թվում՝ ճգնաժամային իրավիճակների արձագանքման կանոնակարգ, որն ընդունվել է 2010 թվականին, ու որտեղ հստակ գրված են գործողություններ, բայց, միեւնույն ժամանակ, կա հստակ ըմբռնում ու հասկացություն ՀԱՊԿ պատասխանատվության գոտու մասին», - Ազգային ժողովում հայտարարեց Նիկոլ Փաշինյանը:

Նա ասաց, թե ՀԱՊԿ-ից խնդրել են մի բան՝ ճշգրտել ՀԱՊԿ պատասխանատվության գոտին Հայաստանում:

«Այսինքն՝ մեզ ասել իրենց պատկերացումը, թե որն է Հայաստանը. մենք այս հարցի հստակ պատասխանը չենք ստացել», - նշեց վարչապետը:

Նա ասաց, թե ԵՄ քաղաքացիական առաքելության գործուղումը հնարավոր է դարձել, որովհետեւ Պրահայում տեղի ունեցած քառակողմ հանդիպման արդյունքում Եվրամիությունը հստակ գծագրել է, թե որն է Հայաստանի Հանրապետությունը:

Վարչապետն ընդգծեց՝ եթե որեւէ առաքելություն չգիտի, թե որն է Հայաստանի Հանրապետությունը, ոնց է դիտարկելու՝ օկուպացված է ՀՀ տարածքը, թե ոչ:

Նիկոլ Փաշինյանի խոսքով՝ Ադրբեջանն իր ագրեսիվ գործողությունները բացատրում էր նրանով, որ Հայաստանը, կոնկրետ ՀՀ վարչապետը ավելի ու ավելի շատ ռուսական զորքեր է բերում ու տեղակայում Հայաստան-Ադրբեջան սահմանին ու պատրաստվում է հայ-ռուսական համատեղ ագրեսիվ հարձակում Ադրբեջանի դեմ, ու Ադրբեջանը հարձակումներով պարզապես փորձում է հավասարակշռել իրավիճակը:

«Արեւմուտքում փորձ էր արվում Հայաստանը ներկայացնել որպես Ռուսաստանի ագրեսիվ քաղաքականության մասնակից, իսկ Ռուսաստանում՝ որպես Արեւմտյան դավադրության մասնակից: Մենք էլ ասացինք՝ շատ լավ, եկե՛ք դուք տեղում դիտարկեք՝ այդ ամենն իրականությանը համապատասխանո՞ւմ է, թե՞ չի համապատասխանում. սա կարեւոր նյուանսներից մեկն է», - ընդգծեց վարչապետը:

Մենք հասկանում ենք, որ տարածաշրջանային կոմունիկացիաների բացումը, մասնավորապես՝ Հայաստան-Ադրբեջան երկաթուղու եւ ավտոճանապարհների բացումը, էականորեն կմեծացնի մեր առեւտրաշրջանառությունը ԵԱՏՄ-ի եւ ոչ միայն ԵԱՏՄ-ի հետ»,- խորհրդարանում հայտարարեց երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նրա խոսքով՝ Հայաստանը այս առումով է նաեւ շահագրգռված տարածաշրջանային ենթակառուցվածքները բացելու հարցում:

Փաշինյանը նաեւ պատրաստակամություն հայտնեց. «Այն, ինչը գրված է նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետում, մենք պատրաստ ենք իրականացնել»:

«Ամենաշատը Հայաստանն է ուզում, որ այդ ճանապարհները բացվեն. դիմադրում են մյուսները: Ուրիշ որեւէ մեկը ավելի շատ այդ ճանապարհների կարիքը չունի՝ ո՛չ Ադրբեջանը, ո՛չ Թուրքիան, որովհետեւ իրենք բոլոր ճանապարհների այլընտրանքներն ունեն»,- խոսքը եզրափակեց Փաշինյանը:

**Ն.Հ.**

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը ֆեյսբուքյան իր էջում հայտնել է, որ հանդիպել է մարտական եւ ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողների ծնողների հետ:

«Ծնողների հետ զրույցի մանրամասները հրապարակային չեն»,- գրել է Սիմոնյանը:

## ՏՈՅՎՈ ԿԼԱԱՐԻ ԱՌԱՋԱՐԿԸ

«Վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ հանդիպմանը մենք խոսեցինք նրա անձնական մասնակցության եւ Հայաստանի նախագահի եւ վարչապետի հետ փոխգործակցության, ինչպես նաեւ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ նրանց մերձեցման հարցում որպես միջնորդ հանդես գալու նրա ցանկության մասին. մենք դրան աջակցում ենք:

Շատ կարեւոր է, որ Հարավային Կովկասի բոլոր երեք երկրները միասին աշխատեն եւ նպաստեն խաղաղությանը, Վրաստանի դերը՝ որպես կամուրջ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, շատ կարեւոր է: Մենք վարչապետի հետ քննարկել ենք այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերը, եւ ես հույս ունեմ, որ ապագայում Եվրամիության եւ Վրաստանի, ԵՄ-ի եւ Հարավային Կովկասի երեք պետությունների միջեւ համագործակցությունն այդ ուղղությամբ էլ ավելի սերտ կլինի»,- ասել է Կլաարը:

## ՉԵՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ

Թուրքական լրատվամիջոցները չեն անդրադարձել Հայաստանի օգնությանը:

Թուրքական լրատվամիջոցներում պարզապես տեղ է գտել հայտարարություն, որտեղ նշվել են բազմաթիվ երկրների ղեկավարների հեռախոսազրույցները նախագահ Էրդողանի հետ, որի շարքում հիշատակվել է նաեւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի անունը:

Հիշեցնենք՝ ԱԳՆ խոսնակ Վահան Հունանյանը նախօրեին հայտնել էր, որ Հայաստանը փրկարարական ջոկատներ է ուղարկում Սիրիա եւ Թուրքիա՝ աջակցելու ավերիչ երկրաշարժի հետեւանքով տուժած շրջաններում իրականացվող որոնողափրկարարական աշխատանքներին:

## ՀՈՒՇԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը եւ Խորվաթիայի ԱԳ նախարար Գորդան Գրլիչ Ռադմանը ստորագրել են ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի եւ Խորվաթիայի արտաքին գործերի եւ եվրոպական գործերի նախարարության դիվանագիտական ակադեմիայի միջեւ փոխըմբռնման հուշագիր դիվանագիտական կրթության եւ վերապատրաստման ոլորտում համագործակցության վերաբերյալ:

73 ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

# 89 ԾԱՌԱՅՈՂ ԵՆԹԱՐԿՎԵԼ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

**2022 թվականին իրականացվել է 73 ծառայողական քննություն, որոնց արդյունքներով ՊԵԿ հարկային եւ մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից 89 ծառայող ենթարկվել է տարբեր կարգապահական պատասխանատվության, այդ թվում՝ 5 աշխատակից ազատվել է աշխատանքից:**

2022թ.-ի ընթացքում 34 մաքսային ծառայող ենթարկվել է տարբեր կարգապահական տույժերի, այդ թվում՝ 3 մաքսային ծառայող ծառայողական քննության արդյունքում ազատվել է ծառայությունից:

2022թ.-ին իրականացվել է նոր ձեւավորվող Երեւանի սպասարկման կենտրոն-մաքսատուն- վարչության մաքսային ծառայողի ընդունելության դիմորդների, ինչպես նաեւ գործող մաքսային ծառայողների բարեվարքության ստուգում:

Բարեվարքության ստուգումն իրականացվել է նախապես մշակված ձեւաչափով, մասնավորապես՝ կատարվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացված հայտարարագրերի վերլուծություն՝ ըստ տարիների, ստուգվել են շարժական եւ անշարժ գույքի, կապը քրեական ենթամշակույթի, առնչությունը մաքսային միջնորդական ընկերությունների հետ, քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության, ինչպես նաեւ այլ օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող տեղեկությունները:

Ուսումնասիրության է ենթարկվել 704 անձ, որից գործող մաքսային ծառայողներ՝132-ը, այլ դիմորդներ՝572-ը: Արդյունքում դրական եզրակացություն է ստացել 260 անձ, այդ թվում՝ գործող մաքսային ծառայողներից՝ 83 անձ, եւ այլ դիմորդներից՝ 173-ը: 49 մաքսային ծառայող բարեվարքության ուսումնասիրության արդյունքում ազատվել է մաքսային ծառայությունից: Շարունակելով բարեվարքության ամրապնդման եւ կոռուպցիայի դեմ պայքարը՝ ՊԵԿ ներքին անվտանգության վարչությունը, համագործակցելով Հարավային եւ Արեւելյան մաքսատուն-վարչությունների հետ, բացահայտել է իրավախախտումների նոր դեպքեր:

Բագրատաշենի մաքսային կետ-բաժին

2022թ-ի ընթացքում ՀՀ ՊԵԿ Արեւելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի կետ-բաժնում կատարված դիտարկումների, մասնավորապես՝ տարբեր քաղաքացիների կողմից ներկայացված ուղեւորային մաքսային հայտարարագրերի վերլուծության, ինչպես նաեւ նույն բաժնի տեսախցիկների տեսաձայնագրությունների դիտարկման եւ վերլուծության, քաղաքացիների սահմանահատումների պատմության ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են Արեւելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնով մի շարք անձանց կողմից ավտոմեքենայի յուղի, մանկական խանձարուրի, լվացող միջոցների, ինչպես նաեւ այլ տարբեր տեսակի ապրանքների ներկրման, ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու, մաքսային ծառայողների կողմից ոչ պատշաճ մաքսային հսկողություն իրականացնելու վերաբերյալ դեպքեր:

Մասնավորապես՝ մի շարք քաղաքացիներ վերը նշված ակնհայտ առեւտրային քանակության ապրանքները, համաձայն լրացված ուղեւորային մաքսային հայտարարագրերի, ՀՀ են ներկրել որպես անձնական օգտագործման ապրանքներ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 20 դեկտեմբերի, 2017 թվականի թիվ 107 որոշման համաձայն: Նշված ապրանքներն առանց համապատասխան փաստաթղթերի, առանց պետական գրանցման (հաշվառման) իրացվել, վերավաճառվել կամ հանձնվել են այլ անձանց՝ վնաս պատճառելով պետությանը եւ խաթարելով օրինական ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը: Բազմաթիվ դեպքերում ներկրված ապրանքների իրական ծավալները թաքցվել են, հայտարարագրվել է ապրանքների մի մասը:

Տրանսպորտային միջոցը Վրաստանից Արեւելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժին է մուտք գործել. մաքսային ծառայողն ավտոմեքենան տեսազննելուց հետո նկատում է, որ առկա են զննման ենթակա ապրանքներ: Տեխանձնագիրը վերցնելով՝ տեսուչի կողմից ավտոմեքենան ուղղորդվում է խորը զննման (անգար) մաքսային հսկողության տարածք՝ մանրակրկիտ զննման համար, սակայն ավտոմեքենան մուտք չի գործում մաքսային հսկողության համար նախատեսված տարածք (անգար), վարորդը մոտենում է մաքսային ծառայողներին, վերցնում է մեքենայի տեխանձնագիրը եւ, առանց մեքենայի բեռը զննելու, հեռանում է մաքսային հսկողության գոտուց:

Մեկ այլ դեպք. ավտոմեքենան մուտք է գործում մաքսային հսկողության համար նախատեսված առանձնացված տարածք, որտեղ մաքսային հսկողություն իրականացնելու համար համապատասխան գործողություններ չեն կատարվում, չեն զննվում քաշը, քանակը, ապրանքատեսակները եւ այլն: Վարորդը մոտենում է մաքսային ծառայողներին, ապա լրացնելով ուղեւորային մաքսային հայտարարագիր՝հեռանում է մաքսային հսկողության գոտուց:

Վերոնշյալ դեպքերի բոլոր հանգամանքները պարզելու նպատակով, ՀՀ ՊԵԿ նախագահի հրամանով, իրականացվում է ծառայողական քննություն:

ԲԴԽ ՈՐՈՇՈՒՄ

# ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՉԵՆ ՊԱՇՏՈՆԱՎԱՐԻ

**Քարձրագույն դատական խորհրդի կողմից առաջարկված օրենսդրական փոփոխությունների արդյունքում լիազորությունները կասեցված 6 դատավորներ դադարել են պաշտոնավարել: Այս մասին տեղեկանում ենք ԲԴԽ-ից:**

«Նրանք են Արա Կուբանյանը, Գեւորգ Նարինյանը, Բորիս Բախշիյանը, Ալբերտ Պետրոսյանը, Դավիթ Գրիգորյանն ու Արուսյակ Ալեքսանյանը:

Վերը նշված օրենսդրական փոփոխության համաձայն՝այսուհետ, 1 ամսից ավելի լիազորությունները կասեցված դատավորների փոխարեն, հնարավոր կլինի կատարել նոր նշանակումներ, ինչը կնպաստի դատարանների գերծանրաբեռնվածության թոթափմանը:

Հավելենք, որ մինչ կատարված փոփոխությունները լիազորությունները կասեցված դատավորների հաստիքները չէին համարվում թափուր, եւ նրանց փոխարինելու մեխանիզմներ չկային, ինչը դատարանների գերծանրաբեռնվածության պայմաններում հանգեցնում էր մինչեւ անգամ ճգնաժամային իրավիճակների:

Օրինակ՝ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աղվան Պետրոսյանի լիազորությունները շուրջ 6 տարի է՝ կասեցվել են, եւ ձգձգվող դատական պրոցեսների ընթացքում նրա փոխարեն այլ դատավոր նշանակելու պայմանների հնարավորության բացակայությունը հանգեցրել է մի շարք խնդիրների, այդ թվում՝ տվյալ դատարանի բնականոն աշխատանքի ապահովման դժվարությունների:

Կյանքի կոչված օրենսդրական լուծումները հնարավորություն կտան խուսափելու համանման իրավիճակներից:

Հավելենք, որ վերը նշված օրենսդրական փոփոխությունները քննարկվել եւ մշակվել են դեռեւս 2022 թվականի դեկտեմբերին՝ Դիլիջանում ԲԴԽ-ի նախաձեռնությամբ կազմակերպված արտագնա աշխատաժողովների ընթացքում, ՀՀ-ում գործող ավելի քան 250 դատավորների, օրենսդիր եւ գործադիր իշխանության ներկայացուցիչների մասնակցությամբ»,- նշվում է ԲԴԽ-ի հաղորդագրության մեջ:

ԼՈՒՐԵՐ

## ԴԵՄՔԸ ԱՅՐՎԵԼ Է

Փետրվարի 8-ին՝ ժամը 10:18-ին, Արագածոտնի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Արագած գյուղում երեխան ընկել է վառարանի վրա եւ այրել դեմքը:

ՆԳՆ փրկարար ծառայությունից հայտնում են, որ առատ ձյան պատճառով շտապօգնության ավտոմեքենան չի կարողանում մոտենալ տուժածին. բժիշկներին երեխային մոտեցնելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Փրկարարները բժիշկներին եւ պարեկային ծառայության աշխատակիցներին մոտեցրել են նշված հասցե, այնուհետեւ տուժածին (Մ. Ա.՝ ծնված 2022 թ.), բժիշկներին եւ պարեկային ծառայության աշխատակիցներին մոտեցրել շտապօգնության ավտոմեքենային. Մ. Ա.-ն հոսպիտալացվել է Ապարանի ԲԿ:

## ԱՅՐՎԱԾ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԴԻ

Երեկ՝ փետրվարի 8-ին, ողբերգական դեպք է տեղի ունեցել Արագածոտնի մարզում:

Ժամը 08:30-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Աշտարակի բաժին ահազանգ է ստացվել, որ «Աշտարակ» բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը կանչով մեկնել է Օշական գյուղի Վ. Ամատունու փողոցի տներից մեկը, որտեղ հայտնաբերել են տղամարդու դի:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

Ոստիկաններն ու քննիչները նշված տանը հայտնաբերել են նույն տան բնակիչ 76-ամյա Սերյոժա Ա.-ի դին՝գետնին ընկած վիճակում, իսկ դիակի մոտ՝ այրված իրեր, այդ թվում՝ կիսաայրված անկողինը:

Դեպքի փաստով Արագածոտնի մարզային քննչական վարչությունում սպանության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

## 164 ՓԱԹԵԹ ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողներն ու Նոր Նորքի բաժնի քրեական հետախույզները մայրաքաղաքի Մոլդովական փողոցում ձերբակալել են 26-ամյա մի երեւանցու: Իրավապահների տեղեկություններով՝ նա մայրաքաղաքի տարբեր թաղամասերում թմրամիջոցով փաթեթներ էր տեղադրում: Երիտասարդի խուզարկությամբ հայտնաբերվել է 30 փաթեթ՝ ընդհանուր շուրջ 30 գրամ Մարիխուանայով: Ըստ նրա՝ հայտնաբերվածը ձեռք էր բերել «Տելեգրամ»-ի միջոցով մայրաքաղաքի տարբեր թաղամասերում տեղադրելու համար: Երիտասարդի տան խուզարկությամբ հայտնաբերվել են 164 փաթեթ Մարիխուանա՝ 300 գրամից ավելի ընդհանուր քաշով: Նա իրավապահներին է ներկայացրել արդեն իսկ տեղադրած 5 փաթեթ: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝փետրվարի 7-ից 8-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 55 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂ

Նիկոլ Փաշինյանը երբեւէ ակտիվորեն չի զբաղվել որեւէ մարզաձեւով, սակայն նրա նախաձեռնությամբ տարբեր մարզաձեւերից անցկացվում են «Վարչապետի գավաթ» անվանումով մրցաշարեր, որոնց անցկացման, դրա հաղթողների դրամական պարգեւատրման համար պետական բյուջեից ծախսեր են արվում: Դիլիջան համայնքում կայացել է «Վարչապետի գավաթ» անվանումով սիրողական սեղանի թենիսի մրցաշար: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հայտնում է , որ դրա՝ թվով 25 մասնակիցները պայքարում էին մրցաշարի մարզային փուլ անցնելու համար: Մրցումները անցկացվել են երկու տարիքային խմբում՝ 18-40 տարեկան տղամարդիկ ու 41 եւ ավելի բարձր տարիքի կանայք եւ տղամարդիկ: Մրցաշարում 1-3-րդ հորիզոնականները զբաղեցրածները Դիլիջան համայնքի ղեկավարի կողմից պարգեւատրվել են հավաստագրերով:

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հայտնում է, որ 1-ին հորիզոնական զբաղեցրածների թվում է Նելյա Սահակյանը, հավաստագրերը մրցաշարի մրցանակակիրներին են հանձնել Տավուշի մարզպետարանի գլխավոր մասնագետ Արթուր Վանեսյանը,Դիլիջան համայնքի ղեկավարի խորհրդական Նոնա Գրիգորյանը եւ մրցաշարի գլխավոր մրցավար, «Դիլիջան մարզահամալիր» ՀՈԱԿ-ի սեղանի թենիսի մարզիչ Նելյա Սահակյանը: Համայնքապետարանի կայքում տեղադրված հաղորդագրությունում նշված է, որ մրցաշարին մասակցել են նաեւ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

Դիլիջանում հարյուրամյակներ շարունակ ռուսներ են ապրում, նրանք Դիլիջան համայնքի լիիրավ քաղաքացիներ են, եւ համայնքապետարանի հաղորդագրության մեջ չարժեր նրանց մասնակցությունը հատուկ շեշտել: Հավաստագրեր հանձնած Արթուր Վանեսյանը ոչ թե Տավուշի մարզպետարանի գլխավոր մասնագետն է, այլ մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության գլխավոր մասնագետը: Ինչո՞ւ 18-40 տարեկանների տարիքային խմբում աղջիկների համար մրցումներ չեն անցկացվել: Ինչպե՞ս կարող է այդ մրցաշարի գլխավոր մրցավար, «Դիլիջան մարզահամալիր» ՀՈԱԿ-ի սեղանի թենիսի մարզիչ Նելյա Սահակյանը հավասար հիմունքներով մրցել 41 եւ ավելի բարձր տարիք ունեցող սիրող թենիսիստուհիների հետ, մրցաշարի ավարտին հավաստագրեր հանձնել, ինքն էլ ստանալ առաջին տեղի համար նախատեսված հավաստագիրը: Դիլիջան քաղաքից հայտնեցին, որ Նելյա Սահակյանը Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանի մորաքույրն է, եւ այդ փաստը տալիս է մրցաշարի հետ կապված շատ տարօրինակությունների պատասխանը:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

# ԾԱՌԱՅՈՂ ԿԱՆԱՅՔ ՊԱՏՎՈՎՃԱՐ ԿՍՏԱՆԱՆ

**Իգական սեռի ներկայացուցիչների՝ կամավոր հիմունքներով զինվորական ծառայության անցնելու համար կառավարությունը իրավական հիմքեր է ստեղծել:**

Պաշտպանության նախարարության կողմից մշակվել է օրենքների նախագծերի փաթեթ, որով սահմանվում են կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու ցանկություն հայտնած իգական սեռի քաղաքացիների կողմից այդ նպատակով դիմելու, նրանց զինվորական հաշվառման, զորակոչի, ծառայության վայր նշանակման, ծառայության ավատից հետո պատվովճարի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Զինվորական ծառայության զարգացման՝ ներառյալ արհեստավարժության բարձրացման, ՀՀ պաշտպանությանը համընդգրկուն բնույթ հաղորդելու եւ իգական սեռի քաղաքացիների համար ՀՀ պաշտպանությանը մասնակցելու հնարավորությունների ընդլայնման նկատառումներից ելնելով՝ ՀՀ կառավարության ծրագրային հիմնադրույթներից է հանդիսանում իգական սեռի քաղաքացիներին կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու օրենսդրական եւ գործնական հնարավորությունների ընձեռումը:

Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորման մեջ նշված է, որ, մասնավորապես, նպատակահարմար է գտնվել իգական սեռի ներկայացուցիչների պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանել 6 ամիս, հստակեցնել նրանց կողմից կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու դիմումների ներկայացման ժամկետները՝ այն տրամաբանությամբ, որպեսզի հնարավոր լինի պատշաճ կարգով եւ ժամկետներում իրականացնել նրանց զինվորական հաշվառման՝ներառյալ անհրաժեշտ բժշկական հետազոտությունների եւ փորձաքննության գործընթացը, սահմանել նրանց զորակոչի կազմակերպման առանձնահատկությունները, ինչպես նաեւ մինչեւ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելը իգական սեռի քաղաքացիների կողմից պարտադիր զինվորական ծառայություն անցնելուց հրաժարվելու հնարավորությունը, այդ քաղաքացիներին ծառայության վայր նշանակել առանց վիճակահանության՝ նախանշված ուսումնական զորամասեր, սահմանել պարտադիր զինվորական ծառայության ընթացքում նրանց կողմից պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու հնարավորությունը, ինչպես նաեւ պարտադիր զինվորական ծառայությունն անցնելուց հետո նրանց համար ՀՀ կառավարության որոշման համաձայն սահմանել պատվովճար՝ 1,5 մլն դրամի չափով:

Օրենքի նախագծի ընդունումը 2023 թվականի եւ հետագա տարիների պետական բյուջեներում կարող է հանգեցնել լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության եւ պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում փոփոխությունների՝ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացիներին ծառայության ավարտի կապակցությամբ պատվովճարի հաշվարկման շրջանակներում, սակայն այդ ծախսերի չափերը հնարավոր չէ հաշվարկել՝ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու ցանկություն ունեցող իգական սեռի քաղաքացիների քանակի վերաբերյալ տեղեկատվություն չունենալու պատճառով:

Օրենքի նախագծում նշված է, որ պարտադիր զինվորական ծառայություն անցնելու ցանկություն ունեցող իգական սեռի քաղաքացիները կարող են համապատասխան տարվա մինչեւ մարտի 1-ը կամ հոկտեմբերի 1-ը դիմում ներկայացնել իրենց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ՝ դիմումի ներկայացման օրվանից հետո հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչին մասնակցելու համար:

Համապատասխան տարվա մարտի 1-ից կամ հոկտեմբերի 1-ից հետո դիմում ներկայացվելու դեպքում իգական սեռի քաղաքացիները ներգրավում են դիմումի ներկայացման օրվանից հետո հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչին հաջորդող հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչին:

*Ս.Հ.*

ԱՆԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐ

# ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾՈՒՄ Է ՌՈՒՍԱԿԱՆ ՋՈՐԱԽՈՒՄԲԸ

**Տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության վերականգնման խնդիրները արդյունավետորեն լուծում է ռուսական խաղաղապահ կոնտինգենտը:**

Այս մասին «ՌԻԱ Նովոստի»-ի հետ հարցազրույցի ժամանակ հայտարարել է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության տնօրեն Պյոտր Իլյիչեւը:

Նա նշել է, որ միջազգային եւ օտարերկրյա կազմակերպություններից Ղարաբաղում դեռ աշխատում է միայն Կարմիր խաչի միջազգային կոմիտեն, եւ «ՄԱԿ-ի մարդասիրական գործակալությունները ադրբեջանցիներից եւ հայերից թույլտվություն չեն ստացել մուտք գործելու այնտեղ՝ նույնիսկ կարիքների գնահատման առաջնային առաքելություն իրականացնելու համար»:

Իլյիչեւի խոսքով՝ «դժվարություններն առաջանում են կողմերի հետ հավասար հեռավորություն պահպանելու անկարողության պատճառով՝ ներառյալ տարածաշրջան մուտքի եւ ելքի եղանակները, հաշվետվությունները, վերահսկողությունը եւ մարդասիրական գործունեության կառուցման իրավական հիմքերը»:

Այս պայմաններում Լեռնային Ղարաբաղին նույնիսկ միջազգային մարդասիրական օգնություն տրամադրելու հարցում առաջընթաց չկա, դժվար թե միջազգային խաղաղապահ կոնտինգենտի գործուղման գաղափարի գործնական իրականացումը, որն առավել եւս կպահանջի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի սանկցիաները, լինի իրատեսական,- եզրափակել է Իլյիչովը՝ շարունակելով:- Մենք ելնում ենք նրանից, որ ռուսական խաղաղապահ զորախումբը արդյունավետորեն հաղթահարում է Լեռնային Ղարաբաղում խաղաղության եւ անվտանգության վերականգնման բոլոր խնդիրները»:

Բացի այդ, հավելել է ռուս դիվանագետը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մանդատի ներքո տեղակայված խաղաղապահ առաքելությունները ոչ միշտ են վայելում ընդունող պետությունների վստահությունը:

«Որոշ դեպքերում վերջիններս ունեն ցածր արդյունավետություն: Հետեւաբար հարցը ոչ այնքան այն է, թե ով է թույլ տվել խաղաղապահ գործողությունը, որքան հակամարտության երկու կողմերի բարի կամքի առկայությունը դրա դադարեցման կամ խնդիրների վերացման հարցում»,- ասել է Իլյիչեւը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 12 ճՏՊ. 17 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

## «ԵՍ ԻՆՁ ՀԱՋՈՂԱԿ ՀԱՄԱՐԵՑԻ»

Շեֆ խոհարար Յուրա Սարգսյանը Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքից է, որն արդեն հայտնի է գաստրոտուրիզմով: Յուրան այստեղ հիմել է երկու հյուրատուն-ռեստորան, որտեղ աշխարհի տարբեր կողմերից գալիս են՝ փորձելու վերջինիս պատրաստած ուտեստները: Յուրան ռեստորանային գործում է արդեն 26 տարի. սկզբում աշխատել է խոհարարի օգնական, հետո մեկնել է երկրից, վարպետացել, բայց կրկին վերադարձել հայրենի գյուղ՝ Ծաղկունք:

Հյուրատուն-ռեստորաններից մեկը Յուրան անվանել է «Խոհարարի տուն»: Այն ունի հատուկ առաքելություն զարգացնելու հայկական խոհարարական ավանդույթները: Հայ խոհարարները գալու են այստեղ՝ ճաշացանկում ավելացնելու իրենց հեղինակային եւ անվանական ուտեստները: «Խոհարարի տուն» հյուրատուն-ռեստորանը «Ակբա Ֆեդերացիա»-ի եւ Գերմանիայի բնության պահպանության միության (NABU-ի) «Գյուղական տուրիզմի զարգացման ծրագրի» շահառուներից է: Տրամադրված դրամաշնորհի միջոցով Յուրան ավարտել է շինարարությունն ու կահավորել տարածքը:

Հյուրատան աշխատանքներին մասնակցություն ունի Յուրայի ամբողջ ընտանիքը. որդիներից մեկը նկարում ու զարդարում է հյուրատան պատերը, մայրը՝ համեղ պահածոներ է պատրաստում, կինը՝ղեկավարում: «16 տարի թողել էի Ծաղկունքն ու հետ եմ եկել, ինձ թվում է՝ էլ չեմ թողնի: Խոհարարությունն իմ հոբբին է, իմ երազանքը: Ես ինձ հաջողակ համարեցի, երբ վերադարձա հայրենի գյուղ եւ հիմնեցի առաջին բիզնեսը: Կապ չունի՝ ֆինանսական եկամուտը մեծ է, թե փոքր: Եթե չես մտածում ֆինանսականի մասին ու զբաղվում ես քո սիրած գործով, ուրեմն կհաջողես: Գյուղական տուրիզմի զարգացման մասով ծրագիր կար. դիմեցի ու 300 հոգուց անցա ես, իմ մտահղացումները: Շնորհակալություն «Ակբա» բանկին ու NABU-ին: Ֆինանսական աջակցություն ենք ստացել անհատույց, ինչը շատ օգնեց»,- նշում է շեֆ խոհարար Յուրա Սարգսյանը: Յուրան նաեւ իր վարպետությունն է փոխանցում սկսնակներին. ունի բազմաթիվ աշակերտներ Հայաստանի տարբեր շրջաններից:

Ամենակարեւորը՝աշակերտներին սովորեցնում է պատրաստել ի սրտե, մեծ հոգով եւ այնպես, ինչպես ընտանիքի համար: «Ակբա Ֆեդերացիա»-ն «Ակբա» բանկի միակ նշանակալից մասնակիցն է, բանկի բաժնետոմսերում ունի 83.8 տոկոս մասնաբաժին: «Ակբա» բանկում ունեցած մասնակցության շնորհիվ՝ «Ակբա Ֆեդերացիա»-ն նպաստում է Հայաստանի ողջ տարածքում գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, գյուղական շրջաններում եւ համայնքներում բիզնես միջավայրի աշխուժացմանն ու զարգացմանը, նշված ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի բարեկեցության աճին:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական ուսումնական հաստատության ատեստավորման ենթակա ուսուցչի կողմից հավաքվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը, չափանիշները եւ նվազագույն չափաքանակը սահմանելու մասին ԿԳՄՍ հրամանի նախագիծը: Ուսուցչի վերապատրաստման կրեդիտը սահմանվում է իբրեւ մասնագիտական գործունեության ձեւի վերապատրաստման դասընթացն ավարտելու եւ դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածության չափման պայմանական միավոր, որը տրվում է վերապատրաստվողին տվյալ վերապատրաստման չափորոշչով եւ ծրագրով սահմանված վերջնարդյունքների առնվազն 60 տոկոսը հաղթահարելուց հետո:**

Ուսուցչի մասնագիտական գործունեության ձեւերին համապատասխան կրեդիտների անվանացանկը ներառում է՝

-առարկայի իմացության կրեդիտ,

-դասավանդման մեթոդամանկավարժական (պրակտիկ) կարողությունների կրեդիտ,

-սովորողին ցուցաբերվող աջակցության կրեդիտ,

- ինքնազարգացման եւ մանկավարժական համայնքի հզորացման կրեդիտ:

Մասնագիտական գործունեության յուրաքանչյուր ձեւի համար սահմանվում են միավորներ: Զարգացման ոլորտի մասնագիտական գործունեության յուրաքանչյուր ձեւի ուսումնասիրության արդյունքում ուսուցիչներին տրվում է 0-100 միավոր: Աշխատանքը համարվում է հանձնած՝ առնվազն 50 միավոր հավաքելու դեպքում:

Զարգացման ոլորտի ուսումնասիրության արդյունքում 60 եւ ավելի միավոր ստացած ուսուցչին տրվում է 1 կրեդիտ: Ուսուցիչը համարվում է ատեստավորված, եթե զարգացման ոլորտներից յուրաքանչյուրի համար ստացել է 1 կրեդիտ: Կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածությունը ներառում է ուսուցչի լսարանային եւ ինքնուրույն իրականացվող բոլոր ուսումնական աշխատանքները՝ մասնակցությունը դասախոսություններին եւ գործնական աշխատանքներին:

Ուսուցչի՝ վերապատրաստման ընթացքում ուսումնասիրած դասընթացների համար ստացած գնահատականները գրանցվում են ակադեմիական տեղեկագրում, որն արտացոլում է ուսուցչի կատարած ուսումնական բեռնվածության ծավալը եւ կրթական ձեռքբերումների որակը: Տեղեկագրում գրանցված կրեդիտներն ուժի մեջ են՝ անկախ վերապատրաստման ծրագրի կամ վերապատրաստող կազմակերպության կարգավիճակի կամ կազմակերպաիրավական ձեւի հետագա հնարավոր փոփոխություններից:

Հնգամյա շրջափուլի ընթացքում տվյալ տարվա (բացառությամբ շրջափուլի 5-րդ տարվա) վերապատրաստումներից անհրաժեշտ քանակությամբ կրեդիտներ չկուտակելու կամ ցածր միավորներով հանձնած մասնագիտական գործունեության ձեւի դասընթացին (իր միջոցների հաշվին) կրկին մասնակցելու եւ դրանք լրացնելու համար կամ անհաղթահարելի ուժի պայմաններում ուսուցչին տրվում է հնարավորություն՝ լրացնել դրանք հաջորդ տարի: Հաջորդ տարի անհրաժեշտ քանակությամբ կրեդիտներ չկուտակած ուսուցիչը համարվելու է չատեստավորված:

ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ

Գ

**Հրապարակային սակարկություններ**

Գայանե Քաջիկի Ռեզյանին պատկանող՝ ստորեվ նշված անշարժ գույքը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին:Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ Պարտապան) սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 28.02.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի 11.03.2020թ. ՍՆԴ/0403/04/19 վճռով սնանկ ճանաչված Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ ստորեւ նշված շարժական գույքի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտով.

Լոտ 1 - Պարտապան Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ կողմից Աշխեն Արշակյանի հանդեպ ունեցած պարտավորությունների կատարման համար գրավադրված եւ Գայանե Քաջիկի Ռեզյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, ք.Երեւան, Կենտրոն Նորագյուղ թաղամաս 126/2 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքը ((համաձայն գնահատման հաշվետվության շինության հնդհանուր տեխնիկական վիճակը գնահատվել է անբավարար), Սեփականության իրավունքի վկայական՝01072015-01-0151, տրված՝ 01.07.2015 թվականին, կադաստրային ծածկագիրը 01-006-0711-0073, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝բնակելի կառուցապատման, հողամասի չափը՝0,010454 հա, իրավունքի տեսակը՝սեփականություն):

**Մեկնարկային գինը՝ 3,495,701 ՀՀ դրամ:**

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված գույքի վրա առկա է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում է գրավի առարկա:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ սնանկության գործով թիվ 2480103328850000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՎԱՆԴԱԼԻԶՄ

# ՏՈՒՖԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ

**2023 թվականի ամանորյա լուսավորությունն ու տոնական զարդարումն աղահովելու համար Հանրապետության հրապարակի՝ պատմամշակութային արժեք հանդիսացող թամանյանական շենքերը ենթարկվեցին վանդալիզմի: Առանց հետեւանքները հաշվի առնելու, տուրֆ տալով ամանորյա լույսերի ձեւավորմանը, բազմաթիվ մեխեր, ձողեր տեղադրվեցին Կառավարության տուֆակերտ թամանյանական շենքերի վրա:**

ArmLur.am-ն այս առնչությամբ զրուցել է ճարտարապետ Անահիտ Թարխանյանի հետ, որը մեզ հետ զրույցում իր վրդովմունքը հայտնեց կատարվածի վերաբերյալ: Ճարտարապետի խոսքով՝ հնարավոր չէ այնպես վերականգնել, որպեսզի այն կարկատանների չվերածվի: «Եվրոպական բոլոր երկրներում էլ զարդարում են շենքերը, բայց ոչ մի անգամ դրանց ուղղակիորեն մեխեր չեն ձգում լուսավորություն ստանալու համար: Նման բաներ նախաձեռնելուց առաջ ստեղծում են հատուկ հարմարանքներ, հատուկ ձգվող ճոպաններ, որպեսզի հետո անվնաս կարողանան այդ լուսաֆորները հավաքել եւ չվնասել պատմական շենքերը: Մեր դեպքում իրականացնող կազմակերպությունը անպատասխանատու կերպով, շատ թեթեւ է մոտեցել այդ գործընթացին: Ես կարծում եմ, որ վաղուց պետք է ստեղծեին համատեղ հանձնաժողով՝ հմուտ մասնագետներով, քանի որ ամեն ճարտարապետ չէ, որ կարող է հանձն առնել եւ փորձել լուծումներ գտնել, եւ ճարտարապետները պետք է լինեն հատուկ արտոնագրերով: Բայց ես նորից եմ կրկնում՝ ինչ էլ ուզում է լինի, ինչ լուծում էլ փորձեն գտնել, տուֆը վերականգնել հնարավոր չէ, կարկատաններից խուսափել չեն կարող, եւ վերականգնման աշխատանքները պետք է սկսել բացառապես արեւային եղանակին՝ ամռանը»- նշեց ճարտարապետը: ArmLur.am-ը հարցում է ուղարկել նաեւ Երեւանի քաղաքապետարան՝ պարզելու համար, թե ինչ աշխատանքներ են ձեռնարկվել ճարտարապետական համալիրի վնասված անցքերը վերականգնելու համար: Մեզ քաղաքապետարանից տեղեկացրին, որ այդ առթիվ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մասնագետների հետ համատեղ ստեղծվել է աշխատանքային խումբ: Ավելին՝ քաղաքապետարանից մեզ նաեւ մանրամասնել են, որ գործընթացը կիրականացվի տոնական ձեւավորման համար անհրաժեշտ հանգույցների ու պարագաների ապամոնտաժմանը զուգահեռ, իսկ վնասված քարերի անցքերը լցնելու, մակերեսները հարթեցնելու համար պահանջվող տեխնոլոգիայի համաձայն՝ անհրաժեշտ է, որ մի քանի օր շարունակ լինի չոր ( առանց տեղումների) եղանակ: Եվ չնայած որ ՀՀ քրեական օրենսգրքի 301-304 հոդվածները բավականին ընդարձակ պատասխանատվության միջոցներ են նախատեսում այդ արարքների համար, բայց այս ամիսների ընթացքում դեռ որեւէ մեկը պատասխանատվություն չի կրել:

*ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

«ԿՈՌՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

# ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔ

**Հայագիտության զարգացման եւ աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամը ներկայացնում է իր հերթական նախագիծը: 2023 թվականի սկզբին լույս տեսավ «Կռունկ Հայաստանի» հայոց լեզվի դասագրքի երրորդ հրատարակությունը:**

Մանկավարժության դոկտոր, հոգեբան Աիդա Մարկոսյանը դեռ 1990-ականներին մշակել է հայերենը որպես օտար լեզու դասավանդելու մեթոդիկա: Դրանից հետո, զարգացնելով իր մոտեցումը, այն հասցրել է հազարավոր ուսանողների՝ թարգմանելով ուսուցումն այլ լեզուներով եւ հասանելի դարձնելով այն առցանց:

Դասական դասագրքի երրորդ հրատարակությունն ամփոփում է քառորդդարյա փորձ, այն հիմնվին վերանայված աշխատանք է՝ չափազանց արդիական այսօր, երբ կտրուկ աճել է հայոց լեզվի ուսուցման անհրաժեշտությունը: Դասագիրքը բաղկացած է չորս մասերից, որոնք հրատարակվել են առանձին գրքերով: Դրանցից երեքը, ըստ լեզվի իմացության եվրոպական ընդունված սանդղակի, համապատասխանում են A1 եւ A2, B1 եւ B2, C1 եւ C2 մակարդակներին: Այն է՝

-ներածական դասընթաց (ութ դաս). թույլ է տալիս տիրապետել հայոց այբուբենի տառերին եւ ծանոթանալ քերականության հիմունքներին եւ հիմնական բառապաշարին,

-հիմնական դասընթաց (ութ դաս). ապահովում է հայերենի իմացության շեմային մակարդակ,

-ընդլայնված դասընթաց (ութ դաս). ներառում է ավելացված բարդության քերականական նյութի ուսումնասիրություն եւ բառապաշարի ընդլայնված քանակի յուրացում,

-քերականական տեղեկատու եւ ուսումնական բառարան:

Դասագրքում ներկայացված է հայերենի զրոյից փուլ առ փուլ լիարժեք յուրացման համակարգ, որի աուդիո նյութերը հասանելի են առցանց:

Հայերենի՝ որպես օտար լեզվի դասագիրք՝ «Կռունկ Հայաստանի»-ն օգտակար է.

-մեծահասակներին, որոնք կսովորեն հայոց լեզուն անձնական, ընտանեկան կամ մասնագիտական նպատակներով,

- լեզվին մասամբ տիրապետող մեծահասակներին, որոնք ցանկանում են լիարժեք յուրացնել հայերենի դժվար ասպեկտներն ու ծածկել հայերենի իմացության բացերը,

-ուսուցիչներին, որոնք օգնում են լեզվաբանական կուրսերի եւ կիրակնօրյա դպրոցների ուսանողներին, վերաբնակիչներին, միգրանտներին՝ մշակելով դասընթացներ կամ անհատական ծրագրեր նրանց համար:

«Կռունկ Հայաստանի» դասագիրքը կարելի է գնել՝

Երեւանում՝ Epigraph խանութ-սրահում, Մոսկվայում՝ «ArkMedia» հրատարակչության կայքում:

ԼՈՒՐԵՐ

## ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի ձյուդոյի հավաքականի անդամները կմասնակցեն Սոֆիայում կայանալիք Եվրոպայի բաց առաջնությանը: Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում կայանալիք EUROPEAN OPEN 2023 մրցաշարին Հայաստանն ունի 4 ներկայացուցիչ՝60 կգ Գասպար Հայրապետյան, 66 կգ Արտյոմ Ղալաչյան, 73 կգ քաշայիններ Արսեն Ավետիսյան եւ Ֆերդինանդ Կարապետյան: EUROPEAN OPEN 2023-ին մասնակցում են 45 երկրի 441 ներկայացուցիչ: Այն կմեկնարկի փետրվարի 11-ին եւ կեզրափակվի 12-ին:

## ԱՄԵՆԱՇԱՏ ՄԻԱՎՈՐ ՀԱՎԱՔԱԾԸ

«Լոս Անջելես Լեյքերս»-ի բասկետբոլիստ Լեբրոն Ջեյմսը NBA-ի բոլոր ժամանակների ամենաշատ միավորներ հավաքած բասկետբոլիստն է: NBA-ի հերթական խաղում «Լոս Անջելես Լեյքերս»-ը մրցել է «Օկլահոմա Սիթի»-ի հետ, որտեղ Լեբրոն Ջեյմսը հավաքել է 36 միավոր՝NBA-ում իր հավաքած միավորների ընդհանուր թիվը հասցնելով 38.388-ի: Այսպիսով, նա դարձել է NBA-ի պատմության ամենաշատ միավոր հավաքած բասկետբոլիստը:

Ջեյմսը գերազանցել է մինչ այդ ընդհանուր առմամբ 38.387 միավոր հավաքած Կարիմ Աբդուլ-Ջաբարայի ռեկորդը: Ջեյմսը մասնակցել է 1410 հանդիպման, իսկ Ջաբարան՝ 1560: Երբ Ջեյմսը գերազանցել է Ջաբարայի ռեկորդը, հանդիպումն ընդհատվել է փոքրիկ արարողությամբ, որտեղ նախկին ռեկորդակիրը անձամբ շնորհավորել է Լեբրոն Ջեյմսին, ինչպես նախ խորհրդանշական գնդակ է փոխանցել նրան:

Լեբրոն Ջեյմսը 38 տարեկան է, NBA-ի քառակի չեմպիոն է, կանոնավոր առաջնության լավագույն բասկետբոլիստ եւ եզրափակիչ շարքի ամենաարժեքավոր բասկետբոլիստ: ԱՄՆ հավաքականի կազմում Ջեյմսը երկու անգամ դարձել է Օլիմպիական խաղեր չեմպիոն:

## ՀԱՅՏԵՐ

Ֆուտբոլի աշխարհի 2030 թվականի առաջնությունը հյուրընկալելու հայտ ներկայացնող երկրները շատանում են:

Մունդիալ-2030 հյուրընկալելու հայտ են ներկայացրել Արգենտինան, Չիլին, Ուրուգվայը եւ Պարագվայը: 2030 թվականին կտոնվի աշխարհի առաջնության 100-ամյակը, եւ կազմակերպիչները հայտարարել են ֆուտբոլային տոնն առանձնահատուկ դարձնելու իրենց նպատակների մասին:

Մինչ այս աշխարհի 2030 թվականի առաջնությունն ընդունելու ցանկություն էին հայտնել Մարոկկոն, Իսպանիան, Պորտուգալիան, Ուկրաինան, Կոլումբիան, էկվադորը, Պերուն: Աշխարհի 2030 թվականի առաջնության անցկացման վայրը կընտրվի 2024 թվականին:

● *Փետրվարի 10-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «Յ. Ս. Բախ» երգեհոնային երաժշտության համերգը: Տոմսերի արժեքը՝1000-2000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Հոսանքի տատանումների պատճառով վնասվել է իմ տեխնիկան: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:**

*Մուշեղ Սաղաթելյան (66 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Նման իրավիճակ առաջանալու դեպքում անհրաժեշտ է նախ պարզել եւ հաշվարկել, թե Ձեզ որքան գույքային վնաս է պատճառվել, որ ապրանքը ինչ արժեք ունի: Այդ նպատակով կարող եք դիմել մասնագիտացված փորձագիտական կազմակերպությունների (օրինակ՝ ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո»)՝ խնդրելով պարզել պատճառված վնասի չափը ու վնասի առաջացման պատճառները: Փորձագիտական եզրակացությունը ստանալուց հետո պետք է դիմում ներկայացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ՝ պահանջելով հատուցել հոսանքի տատանման հետեւանքով Ձեզ պատճառված այն վնասները, որոնք նշվել են փորձագետի եզրակացության մեջ:

*Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Հայաստանի Հանրապետությունում էլեկտրամատակարարումը իրականացնում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն, որը յուրաքանչյուր հասցեում գտնվող անշարժ գույքում էլեկտրամատա-կարարում իրականացնելու համար տան սեփականատիրոջ հետ կնքում է համապատասխան բաժա-նորդային պայմանագիր: Հենց այս պայմանագրով է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն պարտավորվում է իր բաժանորդներին մատուցել պատշաճ որակի էլեկտրամատակարարում: Եվ եթե ոչ պատշաճ որակի էլեկտրամատակարարման հետեւանքով (հոսանքի տատանում) քաղաքացու գույքին պատճառվում է վնաս, ապա այդ վանսը պետք է հատուցվի էլեկտրամատակարարում իրականացնող կազմակերպության կողմից, քանի որ հենց նա է ոչ պատշաճ կատարել իր պարտականությունները (եթե չի ապացուցում, որ հոսանքի տատանումը տեղի է ունեցել ֆորս-մաժորային իրավիճակների հետեւանքով):

*Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ*

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Դպրոցի աշակերտն անընդհատ վիճում է, խանգարում դասապրոցեսը. ո՞ւմ կարող է դիմել ուսուցիչը, եւ ի՞նչ իրավունքներ նա ունի:**

*Մելանյա Խաչատրյան (52 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Եթե աշակերտը վիճում է այլ աշակերտների հետ, վիրավորում է ուսուցչին կամ մշտապես խանգարում դասապրոցեսը, ապա ուսուցիչը պետք է աշակերտին ներկայացնի տնօրենին՝ ներկայացնելով զեկուցագիր՝ կատարված միջադեպի մասին, եւ խնդրելով աշակերտի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ կատարված իրավախախտմանը համապատասխան: Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կարգապահական տույժը կարող է հանվել, եթե սովորողը կարգապահական նոր խախտում թույլ չի տվել եւ դրսեւորել է իրեն որպես բարեխիղճ, օրինակելի, կարգապահ սովորող: Հարկ է ընդգծել, որ ուսուցիչը կամ որեւէ այլ անձ իրավասու չէ դիմել ֆիզիկական կամ հոգեբանական բռնության աշակերտի կարգապահությունը բարձրացնելու նպատակով: Եթե աշակերտը այնպիսի վարքագիծ է դրսեւորում, որ կարգապահական տույժերն ի զորու չեն ապահովել դրա վերականգնումը, ապա ուսուցչի ներկայացմամբ դպրոցի տնօրենը պետք է դիմի տվյալ դպրոցը սպասարկող ոստիկանության տեսուչին երեխային հաշվառման վերցնելու եւ նրա հետ աշխատանքներ իրականացնելու համար: Աշակերտի կարգապահությունը բարձրացնելու նպատակով ուսուցիչը կարող է այդ մասին հայտնել աշակերտի ծնողին, իսկ որոշ դեպքերում էլ տնօրենը իրավասու է ծնողին առաջարկել երեխային տեղափոխել մեկ այլ դպրոց:

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Դպրոցներում երեխաների կարգապահությունն ապահովվում է օրենքով, ուսումնական հաստա-տության կանոնադրությամբ եւ ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով: Յուրաքանչյուր դպրոց ունի իր ներքին կարգապահական կանոնները, որոնք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում դպրոցի տնօրինությունը միջին եւ ավագ դպրոցների սովորողների նկատմամբ կարող է կիրառել բացառապես հետեւյալ կարգապահական տույժերը՝

- նկատողություն,
- խիստ նկատողություն:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը արվել է Երեւանում*

Երեւանի Կոնդ թաղամասում՝ «Սուրբ Հովհաննես» եկեղեցու պատից քարը պոկվել եւ ընկել է կայանած ավտոմեքենայի վրա: Պարզվել է, որ Պարոնյան փողոցում՝ եկեղեցու մոտակա ժայռից տեղի է ունեցել քարաթափում (մոտ 0.8 խմ): Քարի կտորներն ընկել եւ հարվածել են «Սուզուկի» մակնիշի ավտոմեքենայի (վարորդ՝ Է. Վ.՝ ծնված 1976 թ.) կողային հատվածին:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: